Հայտարարվում է մրցույթ «Արտաշատ համայնքի Նշավան գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի դաստիարակի(0.625 հաստիքային միավորը) թափուր հաստիքը համալրելու համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման և հարցազրույցի փուլերը անցկացվում են ըստ ՀՀ ԿԳՄՄՆ 22.10.2024թ. թիվ 1981-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՎ հաստատված հարցաշարերի:

Հաստատության յուրաքանչյուր մանկավարժական աշխատողի թափուր հաստիքի համար հայտարարված մրցույթին կարող է մասնակցել այն անձը, ով համապատասխանում է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի մարտի 27-ի N 20-Ն հրամանով սահմանված տարիֆիկացման պահանջներին:

Մրցույթին մասնակցելու համար ներկայացնել՝

1.Դիմում /Ձև1/ ,

2.Միջին մասնագիտական կամ բարձրագույն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս) մասնագիտական կրթություն՝ համապատասխան որակավորմամբ /դիպլոմ/ ,

3.Անձը հաստատող փաստաթուղթ,

4.Աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ/առկայության դեպքում/,

5.Ինքնակենսագրություն,

6.Մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8.Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական,

9.Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր /դրանց առկայության դեպքում/:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ընդունվում են www.artashat.am կայքում հայտարարությունը հրապարակելու օրվանից՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում՝ 23.04.2026թ-ից մինչև 25.05.2026թ. ներառյալ, յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 10:00-17:00-ը՝ հետևյալ հասցեով՝ ՀՀ Արարատի մարզ Արտաշատ համայնք գ. Նշավան, Լենինի փ. 8:

Մրցույթը տեղի կունենա մայիսի 29-ին ժամը 11:00–ին «Արտաշատ համայնքի Նշավան գյուղի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում:

Հասցե՝ ՀՀ Արարատի մարզ Արտաշատ համայնք գ. Նշավան, Լենինի փ. 8

Էլեկտրոնային հասցե՝ nshavanimankapartez@mail.ru

Տեղեկությունների համար զանգահարել 077075098 հեռախոսահամարով: